



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Маска».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ առաջօրեայ):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն կեղտով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Ե Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր շուկաներ գտնելու փորձեր.— Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ, Փոքրիկ նկատողութիւններ. Նամակ վաղարկատի. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արձագանքներ լուրեր.— ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՒԱԿԱՆ. Պետրոս Դուրեան.

ՆՈՐ ՇՈՒԿԱՆԵՐ ԳՏՆԵՆՈՒ ՓՈՐՁԵՐ

Ներկայ օգոստոսի 15-ին դեպի Պարսկաստանի հարաւային ափերը պետք է ուղևորվի մի նաւ՝ բեռնաւորված ուսուցչական զործարանական ապրանքներով: Այդ նաւը պետք է այցելէ Հնդկական օվկիանոսի և Պարսից ծովի ափերին գտնվող պարսկական քաղաքները և վաճառահաշ աւանները՝ ծանօթացնելու այնտեղի վաճառականներին ուսուցչական ապրանքների հետ:

Սա երկրորդ փորձն է, որ անում է Ռուսաստանի մի տարվայ ընթացքում: Առաջին փորձը թէև փայլուն և փառաւոր չէր, այնուամենայնիւ ցոյց տուեց, որ ուսուցչական ապրանքները կարող են սպառողներ գտնել Պարսկաստանի հարաւային ծովափներում և ուստի նշանակութիւն կարող են ունենալ ուսուցչական աւանտի ընդարձակման վրա:

Ֆինանսների մինիստրութիւնը, ցանկանալով այդ փորձնական վաճառահաշնութեան միջոցով հաստատել կանոնաւոր աւանտարկան յարաբերութիւններ ուսուցչական զործարանների և Պարսկաստանի մէջ, դիմել է Լոսնի, Մոսկուայի և միւս գործարանական շրջանների ղեկավարներին՝ հրաւիրելով ուղարկել իրանց ներկայացուցիչներին այդ շոգենաւով և ժողովել տեղնուտեղը հարկաւոր տեղեկութիւններ այն պահանջների մասին, որ յայտնում է հարաւային Պարսկաստանի դէպի գործարանատերերը, և այն պայմանները մասին, որոնց մէջ գտնվում է այնտեղի աւանտուրը:

Ինչպէս յայտնի է, վերջին տարիները Ռուսաստանի գործարանների արդիւնները մեծ ընդունելութիւն են գտել Պարսկաստանի հիւսիսային մասում, որ սահմանակից է Ռուսաստանին, այն է Ատրէրպատականում, Դիլանում, Մազանդարանում և Խորասանում: Թէ Ռուսաստանի վաճառականները, որոնց մեծ մասը հայեր են, և թէ Պարսկաստանի վաճառ-

ականները նպաստում են ուսուցչական զործարանների ներմուծման Պարսկաստանի մէջ: Միւս կողմից պարսկական ապրանքների համար լաւ վաճառանոց է ներկայացնում Ռուսաստանը և այս տարի Նիժնի-Նովորոժիի ցուցահանդէսի համար Պարսկաստանից ուղարկված են ապրանքներ մեծ քանակութեամբ:

Պարսկաստանի հիւսիսում ուսուցչական ապրանքները արդողութեամբ մրցում են եւրոպական ապրանքների հետ: Հարաւում աւելի զգուշ կը լինի այդ մրցումը և հարկաւոր կը լինի եռանդուն ու յամուռ գործունէութիւն բաւարար հետեւների հասնելու համար: Եւրոպական պետութիւնները իրանց վաճառականների հետ միասին տարիներ շարունակ աշխատել են այդ ուղղութեամբ և արդողութիւն դրսեւորել: Արդեօք Ռուսաստանի գործարանատերերը և վաճառականները կարող կը լինեն ցոյց տալ տոկոսնութիւն և եռանդ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԱՆՔՆԵՐ

LVI

«Լինել, թէ չը լինել».— Կան ինչ հարց է գրված այժմ մեզանում մշտական դերասանական խմբի նկատմամբ:

Կամ մի տարի էլ քաջ տալ, ինչպէս քաջ էր տալիս մի քանի տարի շարունակ Բագուն, ահա զինքն փնտրում ու յետոյ «Բագուն» խմբի ղեկավարը երկար ժամանակով, կամ այժմ մի տարով «Բագուն» խմբի, որպէս զի մի տարուց յետոյ հնարաւոր լինի գործը դնել ամուսնի հիմքերի վրա:

Այնպէս, ինչպէս մինչեւ այժմ է եղել, չէ կարող երկար շարունակել: Այդ պարզ է ամենքի համար, բացի մեր դերասաններից, այսինքն բացի այն մարդկանցից, որոնք ամենից լաւ պէտք է հասկանային այդ:

Հայ հասարակութիւնը, մասնաւոր ունեւոր դասը, չէ յաճախում հայ թատրոնը, եւ թատրոնական գործը անկարելի է առ այժմ առաջ տանել առանց դէֆիցիտի:

Կան մարդիկ, որոնք, սիրելով թատրոնական գործը, հաւանալով նրա հասարակական դաստիարակիչ նշանակութիւնը, յանձն են առնում այդ դէֆիցիտը:

Բայց ամեն բան սահման ունի: Այդ մարդկանց ներկական եւ բարոյական կարողութիւնը՝ զոհողութիւններ անել մի հասարակական գործի համար.— նոյնպէս սահման ունի:

Նրանք համաձայն են տանել դէֆիցիտի բերք, բայց ուզում են, որ այդ բերքը թեթեւ լինի:

Եւ ահա այդ է, որ մեր դերասանները չեն ուզում նկատի առնել: Խօսեցրէք մեր դերասաններին, նրանք հասարակական գործիչներ են, նրանք զեղարուեստի տաճարի ջուրմուր են, նրանք հայ թատրոնի սիրահարներ են, նրանք արժանի են ներկայ սերունդի երախտագիտութեան եւ ապագայի յիշատակին:

Եւ մասամբ իրաւունք ունեն նրանք, նրանք շատ գոհողութիւններ են կրում իրանց գործունէութեան մէջ:

Բայց բանն էլ հէնց այն է, որ մենք, հայերս գոհողութիւն ենք անում միայն այն ժամանակ, երբ ստիպված ենք:

Մենք կարող ենք թափառել քաղաքից քաղաք կամ միայն անգործ, բայց տեսնելով, որ ընդհանուր գործը չէ կարողանում տանել մեր ստացած ոռնիկների ծանրութիւնը, մենք ոչ միայն պատրաստակաութիւն չենք ցոյց տալիս պակասեցնել մեր պահանջները, այլ նոյն իսկ աւելացնում ենք: Մենք 150 էինք ստանում, առէք այժմ 200, մենք կէս բէնէֆիս ունէինք, առէք այժմ ամբողջ բէնէֆիս:

Աւելորդ է ասել, որ այդպիսի դէպքում միւսում է խանութը փակել, եւ մեղաւորը այդ բանում կը լինին իրանք դերասանները, որոնց այժմ առաջարկվում է, եթէ ոչ շատ մեծ, գոնէ մեր բեմի համար միանգամայն վաշխուշ ոռնիկ, իսկ եթէ նկատի առնել լինենք, թէ քանի անգամ են խաղում մեր դերասանները, նրանց ոռնիկները չէ կարելի նոյն իսկ շատ մեծ չը համարել:

Եւ ահա այդպիսի պայմաններում նրանք պատճառ են դառնում հայ թատրոնական գործի խանգարման:

Հասարակութիւնը պետք է իմանայ այդ, որովհետեւ գործը հասարակական է:

S. Յ.

ՓՈՔՐԻԿ ԿԵՍՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի զանազան խաւերին քիչ թէ շատ ծանօթ մարդը անշուշտ կը նկատէ, որ վերջին մէկ երկու շաբաթը ինչ որ անսովոր կենդանութիւն է տիրում Թէեւ խեղդող շոգեր են, բայց եւ այնպէս տեսնում են մի տեղ հաւաքված մի խումբ երիտասարդներ տաք-տաք խօսում, վիճում են, եւ նրանց շարժումները, ձեւերը, հայեացքների վառվումն արտայայտութիւնները.— այս բոլորին տալիս են մի առանձին

գրաւորութիւն: Մի այլ տեղ խմբված՝ աւելի հասակաւորները նմանապէս վիճում են տաք-տաք կերպով. խառնվում են նոյն իսկ արդէն պատառութեան չէմքը ոտը կոխածները: Մի երրորդ խումբ՝ աւելի միմեանց սեղմված՝ ինքնաբաւական շարժումներով ինչ որ ծրարներնուով է զգալի: Մի խօսքով, մի յայտնի շքերհի բոլոր խաւերը էլ շքերհաւանապաշտ, եռանդուն գործունէութեան մէջ են: Դրանց մէջ կը գտնէք բոլորապէս թաղաւորողներ, յայտնի թամաղաններ, յայտնի եւ անյայտ թատրոնական գործիչներ եւ մի երկար շարք զանազան խաւերի անձնաւորութիւններ:

Կողմնակի դիտողը ուղղակի կը հիմնայ այս կենդանութիւնից եւ գուցէ մտքումը մեղադրէ էլ այն անհասուններին, որոնք յանգնութիւն ունեն դրաւարելու, որ մեր երիտասարդութիւնը զառամեալ է, որ մենք չը դիտենք ոգեւորվել, որ մեզ ոչինչ չէ հետաքրքրում: Հապա այս ինչ եռանդ է, որ վարակել է բոլորին մեծից մինչեւ փոքրը, կը հարցնէ նա:

Հետեւ մի շրջէք եւ մի փոքր մօտիկից հետաքրքրվեցէք, ու կ'իմանաք, որ այս ամենի պատճառը, ամենքի խօսակցութեան, ամենքի հիացմունքի եւ բաղձանքների առարկան... երկու հատ նոր եկած շանսոնէտային երգչուհիներն են...

Ամենքը աշխատում են աւելի լաւ գործի արժանի եռանդով հանդիսանալ նրանց, արժանանալ նրանց ամենաթոյլ ժպիտներին. բացել են ծախսերի մրցութեան մի մեծ ապարէզ. ասիական երեւակայութիւնը՝ իր հազար ու մէկ դիւրեւերով՝ կատարեալ գործունէութեան մէջ է.— եւ այս ամենը ինչի համար... մի քանի ժամվայ գոաւածութեան համար:

Հաճելի է, երբ մարդ տեսնում է, որ մենք դեռ կարող ենք ոգեւորվել, երեւակայութիւններն ազատութիւն տալ, մասնաւոր գործերը թողած՝ մի որոշ նպատակի ետեւից ընկնել: Բայց երբ տեսնում ես, թէ ինչու համար են այդ ամենը, միանգամայն զգվում ես:

Եթէ այդ բոլոր ոգեւորութիւնների եւ գործը դրած բաղձառեալ մտաւոր եւ դրամական միջոցների գոնէ մի չնչին մասը ընդունակ լինէինք նուրբ մեր հասարակական գործերին, միթէ մենք ստիպված կը լինէինք համարեա ամենայն օր լրագիրներում կարգալ գանգատներ եւ յանդիմանութիւններ:

Շատ բաւականութիւնների հետ՝ դոնէ մի քիչ գործ:

Անյուշ

ԲԱՆԱՍԻՒՐԱԿԱՆ

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

(Մեկնեալ յիշմամեակի առիթով)

VII

Դուրեանը միանգամայն հեռու էր այն բարկալից հանգամանքներից, որ մի այլ տաղանդաւոր եւ անբաղդացած բանաստեղծ՝ Չէօրէր-լին՝ բանաստեղծական կրիմայ է անուանում: Գուցէ այս բանաստեղծական կրիմայի բացակայութիւնը՝ քաղցր, զրկանք, վիշտ, ամաչ, հիւանդութիւնը եւ այլն՝ շատ անգամ ուժեղ դրդումներ է տալիս բանաստեղծներին եւ նրանց չափազանց բեղմնաւոր է դարձնում, բայց միւս կողմից չը պէտք է մոռանալ, որ այդ տեսակ շոգիւնները սուղ հանգամանքները երբեմն ճակատագրական թափով են ներգործում: Կան բանաստեղծական փխրուն հոգիներ, որոնք մի հարուածով անգամ անվերականգնելի են դառնում: Ինչպէս մի նուրբ հանելու փշրանքներ:

Այս տեսակ քնքշող հոգու տէր էր եւ մեր բանաստեղծը: Նրա ճակատագիրը, բանաստեղծական խառնվածքը եւ այն տարապայման-

«անբանաստեղծական» կրիման, ուր նրան վիճակված էր շատ կարճ միայն չնչին՝ մեզ թոյլ են տալիս նրա վերաբերմամբ նոյն խօսքերը գործածել: Ինչ որ ասել է Հայնրիխ վալդմարիկ Նովալիսի նկատմամբ. «Եւս լսում էր բոյսերի զրոյցը, նա գիտէր մատաղ վարդի գաղտնիքը».— նա նոյնացնում է իրան ամբողջ ընտելութեան հետ, եւ երբ աշունը եկած ու անհունները թափվեցին.— նա էլ թաղանթաց:

Դուրեանը մեռաւ՝ առանց դեռ հասունացած եւ կազմակերպված լինելու. բայց իր դեռ կազմակերպող, իսկ չըղծի ստեղծագործութիւնները՝ ամբողջ նա երկնային կրակից խլված փայլուն կայծեր թողեց իր ետեւից. սա մի գրաւական է երթողներու, որ նա մի խոշոր եւ բեղմնաւոր բանաստեղծ կարող էր դառնալ ապագայում: Իր պատանեկական հասակի ստեղծագործութիւններով անգամ մենք կարող ենք նրան համարձակ կերպով եւրոպական խոշոր քնարերգուների հետ համեմատել.— այս համեմատութիւնն անում է Դուրեանի երկերի ամբերիկունի թարգմանիչը: Գուցէ մի փոքր տարօրինակ հնչէ, բայց մեզ թւում է, որ նրա ինքնուրոյնութիւնը, տաղանդի ոյժը եւ ընդարձակ լինելը աւելի շուտ պէտք է նրա պատանեկական ստեղծագործութիւնների մէջ որոնել, երբ նրա միտքը դեռ մի չը բացված կոկոնի էր նմանում, զգացմունքները եռուն, բայց ողջա-

խոն էին, սիրտն զգայուն, տպաւորւող, երեւակայութեան թռիչքը՝ արագընթաց:

Այսպիսի մատաղ հասակում այսքան տաղանդաւոր ստեղծագործութիւնների ընդհանուր բանաստեղծական գրականութեան մէջ շատ հազուադէպ էր երեւում եւ կազմում.— պատանւում են միայն մի քանի բանաստեղծ գրողների մօտ: Այս երեւոյթն ունի անկասկած իր հիւանդոտ եւ անբնական երեսը, բայց տաղանդի ոյժը այնպէս թէ այնպէս պահպանում է իր փայլը: Դուրեանը եթէ աւելի կարդացած, աւելի ուժեղ զրգումներ ստացած լինէր՝ անշուշտ կը ստեղծագործէր եւ ուրիշ գոյնի բանաստեղծութիւններ, որոնք գուցէ աւելի խոր, աւելի բազմակողմանի լինէին.— երբեմն նա տարբեր ստանաւորներում մի եւ նոյն թեման, շատ անգամ նոյն իսկ մի եւ նոյն պատկերն ու արտայայտութիւնն է գործածում:

Բացի ֆրանսիական բանաստեղծներից նա երթարկված է եւ իր ժամանակվայ մի քանի հայ բանաստեղծների ազդեցութեանը, որոնք նոյնպէս բանաստեղծական հակումներ էին ցոյց տալիս.— Ալիշան, Նայ-պէյ, Պէշկիթաշեան եւ այլն.— եւ որոնց բոլորին էլ նա՝ մեր խորին համոզմունքով՝ գերազանցեց, ամենից առաջ հէնց արաբաբուստ՝ նա փոխանակ գրաբարի՝ աշխարհաբար էր գրում իր բանաստեղծութիւնները,

եւ այդպիսով անգին զարկ տուեց եւ նոյն իսկ աշխարհիկ բանաստեղծութեան ստեղծողը հանդիսացաւ արեւմտեան հայերի չըղանում:

Ինչպէս Գերմանիայում մի ժամանակ վիճում էին թէ ունի Եւրոպայում առաջնութեան դափնեկր՝ Գեօթերին թէ Նիլերին.— այնպէս էլ մեզանում մի յարուցվել եւ գուցէ դեռ երկար կը ծեծվի այն խնդիրը, թէ ով է աւելի տաղանդաւոր: Դուրեանը թէ Պէշկիթաշեանը Պէշկիթաշեանի յաղողութիւններից մէկն այն է, որ նրա քնարը երբեմն այնպիսի մօտիվներ է հնչեցնում, որոնք զգալի կերպով արձագանք են տալիս ազգային ժամանակակից պահանջներին, հասարակական ցաւերին. ահա այստեղ պէտք է փնտռել նրա ժողովրդականութեան գաղտնիքը, այն ինչ Դուրեանը աւելի ինքնամփոփ, աւելի անհատական երգիչ է: Եթէ միայն ազգային ցաւերը երգելու չնորիցը առիթ տար մեզ որ եւ է մէկին առաջնութեան ուսուցիչը՝ այն ժամանակ այս պատիւը անկասկած աւելի շուտ Գամառ-Բաթրայային պէտք է պատկանէր. մի այսպիսի վերաբերմունք օտարաշէն ժամանակի ոգու եւ պահանջներին տեսակետից շատ հակառակ էր ինչ որ, իսկ դեղաւոր ու եւստական տեսակետից դա չէր դիմանայ եւ ոչ մի քննադատութեան: Այնուամենայնիւ միտքով հաշուով, հրապարակաբար միտքով է հրապարակաբար եւ բա-

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Յուլիոսի 27-ին

Շոք է, անտանելի չոք... այն աստիճան, որ թուլացնում է գիւղացու բոլոր ուժերը եւ անկարելի է դարձնում եռանդով շարունակել ամառային բազմաթիւ գիւղական աշխատանքները։ Բորենու աճն էլ միւս կողմից է ջլատում խեղճ գեղջուկի ուժերը. ամբողջ օրը արեգակի այրող ճառագայթների տակ արեւն քրտինք թափելուց յետոյ, երբ արեգակի մայր մտնող ճառագայթների հետ գեղջուկն էլ, որպէս ընտելեան հարազատ զուակ, պէտք է մտնի ունկողին հանգստութիւն տալու իր վատակամ մարմինը, ստիպված է կամ փակվել անօդ խրճիթում եւ գիշերներն էլ խաչվել չոքից, կամ, եթէ կալումը կամ դաշտումն է, նստել մի ապաստով տեղ եւ առանց աչք փակելու անցկացնել գիշերները։ Վարդագէտը—անա այն բանը, որ 2—3 տարի է շարունակ կրկնվում է էջմիածնի գաւառի մի մասի գիւղերում եւ ամեն անգամ կրկնվում առ ու սարաւի է տարածում իր շուրջը։ Մեր գաւառը ունի բազմաթիւ պահապան գիւնդեր, որոնք պէտք է պաշտպանեն գիւղացիներին անապատների յարձակումից եւ թաղանթից, սակայն մինչեւ այժմ ոչ մի մարդաւազակ այնքան աւերում չէ կատարել, որչափ այս գայլաւազակը. անցեալ տարի միայն մեր գաւառից բորենին կերել եւ վերաւորել է մինչեւ 28 չափահաս եւ անչափահաս անձեր, իսկ այս տարի բացի կենդանի մարդկանցից քանդել է բազմաթիւ գեղեցիկներ եւ կերել մեռած դիակներ... Եւ չը նայած այս բոլորին, մեր պոլիցիան միանգամայն անտարբեր է եւ իր ձեռքի տակ ունեցած պահապան զինուորներով չէ մտածում խտտ միջոցի դիմելու այս աւերիչ եւ վտանգաւոր գայլաւազակի արմատը կտրելու եւ հանգստութիւն տալու մեր գաւառի բնակիչներին։

Սակայն անաշոգութիւնը եւ թշուառութիւնը միայն բորենու պատճառով չէ։ Գաւառից դարձի սկիզբը մեր գաւառին էլ անշոգութիւն չէ ուզում պարզեցնել եւ այնպիսի պայմաններ է ստեղծել, որ խեղճ գիւղացիին ստիպված է մոռացութեան տալ բորենու սարսափը, որովհետեւ ցորենի այս տարվայ անաշոգ բերքը եւ ջրի պակասութիւնը աւելի վտանգաւոր եւ անխիղճ են, քան իսկական բորենին։ Բորենին աշոգ դէպքում կարող է տանել մէկ գիւղից 5—10 մարդ կենդանի կամ մեռած, այն ինչ ցորենի պակաս բերքը եւ ջրի նուազելը թշուառութեան պատճառ են դառնում տանեակ գիւղերի եւ տասնեակ հասարակութիւնների համար։

Անցեալ տարի մինչեւ այս ժամանակ վաղարշապատցի տարել էր իր տունը մոտաւորապէս հարիւր հազար պուդ ցորեն եւ դեռ մեծ մասն էլ մնացել էր կալում կալելու, իսկ այս տարի կալում դիզած ցորենի մեծ մասը կալելով հազիւ տարած լինի տուն միայն 10—15 հազար պուդ ցորեն... Պատճառը այն է, որ անցեալ տարի ցորենի բերքը շատ ավել էր եւ միջին թւով մէկին տասն էր գալիս, այն ինչ այս տարի մեծ մասը հազիւ է կարողանում միայն սերմացուն ստանալ, իսկ մնացածներն էլ մէկին 3—4 հազիւ են ստանում։ Դեռ

նստեղծը մնում է բանաստեղծ։ Մեր նպատակը չէ ներկայ յօդուածում տարբեր ժամանակներում եւ տարբեր ազգերի մօտ երկար եւ երբեմն աւելորդ վիճաբանութիւնների նիւթ դարձած մի կարեւոր օկզորունքի խնդիր արծարծել—արուեստը արուեստի համար թէ կեանքի Առանց այս երկարաբանութիւնների մէջն ընկնելու՝ մեզ թւում է, որ ամենակարեւոր եւ հիմնական խնդիրն է դեռ գեղարուեստական երկի հոգեբանութիւնը՝ գեղարուեստական առաջին տպաւորութիւնից մինչեւ ստեղծագործութեան վերջին վայրկեանը՝ խոր եւ մանրազնին ուսումնասիրութեան ենթարկելը։ Թէեւ բոմանտիք, բայց գեղարուեստական եւ գրական շատ նուրբ երակի տէր մի քննադատ՝ Շլեյզլը՝ իրաւացի կերպով նկատում է. «Երբ մէկը բացատրում է, թէ ինչպէս է արուեստը ստեղծվում, առաջ գալիս՝ նա միաժամանակ ամենապարզ կերպով ցոյց կը տալ նաեւ, թէ ինչ պէտք է նա լինի»։ Այս կրիտիկական ընդունելիս՝ գեղարուեստական ճաշակի տէր քննադատը իրան երբեք թոյլ չի տալ հարցնել՝ «Ինչ պէտք է տար մեզ այս արուեստից»։—մի պարտաւորութիւն, որ միայն բարոյախօսի, մանկավարժի, աստուածաբանի, գուցէ եւ հրապարակախօսի գործն է, բայց ոչ երբեք լուրջ քննադատ—այլ թէ ինչ է նա կամեցել եւ ինչպէս է պատկերացրել,

լաւ է, որ ցորենի դինը կանգ է առել եւ պուդը 65—80 կօպէկից չէ բարձրանում, եթէ ոչ գիւղացին միանգամայն կորած էր։ Շատ վտանգաւոր է եւ ջրի պակասութիւնը։ Անցեալ տարի այս ժամանակ առատութեամբ ջրվում էին ոչ թէ միայն այգիներն ու բամբակները, այլ եւ այն եօնջա տեղերը, որոնք ոչ մի տարի այդ ժամանակ չէին ջրվել եւ հասարակական վճռով նոյն իսկ չը պէտք է ջրվէին, իսկ այս տարի գիւղացու մնացած յոյս մի կտոր բամբակն էլ է չորանում, մի կողմէ այգին էլ։ Գիւղացին յուսահատութեան մէջ դիմում է ջրարարմին եւ բողբոջում է ուր հարկն է, բայց ինչ անէ բողբոջը, երբ ջրերի քչութեան հետ կողմնապահութիւնն էլ միւս կողմից է թագաւորում։ Կայ գիւղացի, որ 30—40 օր կը լինի ջրեր չէ ստացել իր բամբակի համար, իսկ կան եւ այնպիսի բազաւորներ, որոնք 5—6 կտոր բամբակ ունենալով հանդերձ 15—20 օրն էլ մէկ անգամ կանօնաւոր ջրել են իրանց բամբակը։ Աշոգութիւնը այժմ մէջ է գտնվում, իսկ ոչոք բազկացած է միշտ եւ պաշտօնից, եւ դիրքից եւ հարստութիւնից... Եւ ուղի որ առանց ոչ մի փորձում է բանը ուսին առնել վրա դուրս գալ եւ ջրեր կապել, նա կամ լաւ ծածկած պէտք է վերադառնայ տուն եւ կամ գլուխը ջարդված։

Ա. Օհանջանեան

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, յուլիոսի 25-ին

«Մշակ» № 155-ում ուսանող Ղ. Տէր-Ղազարեան յարձակվում է այն պարոնների վրա, որոնք խոստանում են ուսանողներին օգնութիւն եւ յետոյ դրժում են իրանց խօսքը։ Թոյլ տուէ՛ք ինձ այդ առիթով արձանագրել շատերից մի օրինակ, որը ընտրոյ է եւ ուրիշ տեսակէտից։

Մի տարի օրանից առաջ Բագրի մի խումբ նորաւարտ ինժեներներ մտադրվում են իրանց հաշուով ուսանողներ պահել եւ իրանք են լինում, որ յայտնում են սրտն ու նրան՝ «արժանաւոր եւ ապագայ խոստացող ուսանողներ գտնելու համար։ Եւ անհրաժեշտ առաջարկում են՝ որպէս թղթակաւոր, մի երիտասարդ գրողի Այդ մարդուն անհ նրանք ուղարկում են արտասահման, եւ ինչ էք կարծում, չի անցնում մի-երկու ամիս եւ նա սկսում է դաժնաբանել, թէ իրան փող չեն ուղարկում, թէ ինքը շատ վատ դրութեան մէջ է։ Նամակ նամակի ետեւից գրելով, նա խնդրում է անյապաղ իրան փող ուղարկել։ Սակայն պ. պ. ինժեներները լայնորէ չեն անում նոյն իսկ պատասխանելու նրա խաղաղութիւն նամակներին։ Ուսանող ընկերները, տեսնելով նրա անել գրութիւնը, իրանք են սկսում նամակներ տեղացիներին քննարկել քարեքարների վրա, երբ վերջապէս նրանցից մէկը բարեհաճում է պատասխանել, ուղարկելով ամսականը։ Անցնում են ամիսներ, կրկնվում է նոյն պատմութիւնը մի քանի անգամ։ Եւ ինչ է դուրս գալիս։ Երիտասարդ գրողը ոչ միայն ոչինչ չէ կարողանում սովորել արտասահմանում (շատ ծիծաղելի կը լինէր քաղցած փողով եւ անորոշ դրութեան մէջ մի բան սովորել), այլ եւ շատ լուրջ կերպով հիւանդանում է։

Նոյն տեսակ մի խաղ նրանք խաղում են եւ իրանց երկրորդ թշուառութեան գլխին։ Երկուսից մէկը, կամ թող պ. պ. ինժեներները իրանց համար ուսանող ընտրեն այն հաստալից եւ հաստալից

այդ տեսակ քննադատը, որ յիշատի կ'օչում մով քննադատ է, ոչ թէ հրահանգող, քարոզող, դատող է, այլ նկարագրող, պարզող, վերլուծող—նա արուեստագէտի հոգու թրթռումների քրքորն է, թարգմանողը։ Յայտնի բանաստեղծն է քննադատը։ Եթէ չլուրջ շատ սրբալիտ կերպով նկատում է. «Բնականաբանները երբեմն նրա համար են դատաւորի դեր կատարում, որովհետեւ անկարող են թագաւոր դառնալ»։ Պահանջել մի բանաստեղծից, որ նա անպայման տենդենցիօզ պէտք է լինի՝ նոյնն է թէ՛ այդ մի եւ նոյնը մի նկարչից կամ մի երաժշտից պահանջվում լինէր—մի պահանջ, որ միանգամայն ծիծաղելի է ի հարկէ։ Սկզբունքը սակայն երեք դէպքումն էլ անփոփոխ է մնում, միայն ստեղծագործութեան եղանակն է տարբեր—մէկը հնչեւներով, միւսը գոյներով, իսկ իրրորդը կօսեցողութեան արտայայտում իր հոգու յորդորը։ Գեղարուեստի ինքնուրոյնութիւնը նոյնքան անձեռնմխելի է, որքան եւ գիտութեանը։ Թէ մէկը եւ թէ միւսը կարող են իրանց հետ եւ աւանդներով անասելի բարիքներ մատակարարել մարդկութեան—մի բան, որ դարերից ի վեր տեղի է ունեցել եւ չաբունակ տեղի է ունենալու,—բայց պահանջել, որ գիտութիւնը եւ գեղարուեստը այդ բարիքներին յարմար ունենան՝ կնշանակէ թէ մէկի եւ թէ միւսի ինքնուրոյնութիւնը բացասել, նրանց

տակալի մարդուն, որ կարողանայ տանել ամեն տեսակ բարոյական եւ նիւթական զերկանքներ, կամ ձեռք քաշեն բարեբարութիւն անելուց։ Ո՛վ է նրանց ստիպում զաղափարական գործունէութեամբ զբաղվել մի այսպիսի «անզաղափարական» ժամանակ եւ այն էլ Բագրում։ Վերջապէս օր լուրջ ինժեներն է այդ տեսակ «երեսխալութիւններով» զբաղվում, կարեւոր գործերը թողած։ Զէ՛ որ զաղափար, իդէալ եւ այլ այս տեսակ բաներ մեր ժամանակում յատուկ են միայն աշակերտական եւ ուսանողական նստարանին։

Վերջին ժամանակներս Բագրում մի շարք գեղեցիկ ձեռնարկութիւններ աշոգութիւն չունեցան եւ ցուալի վախճան ստացան միայն շնորհիւ այն բանի, որ գործի մէջ խառնվում էին միշտ զանազան նորաւարտ ինժեներներ, այլ եւ իրաւաբաններ, որոնք իրանց վրա վերցնելով պատասխանատու դերեր եւ այնուհետեւ ոչինչ չանելով, գործը մեղմում էին։ Եւ ոչ միայն նրանք մեղմում են գործը, այլ եւ սպանում են ուրիշների մէջ ամեն մի հասարակ այդ տեսակ գործերն առհասարակ։ Մինչդեռ եթէ այդ պարոնները չը խառնվէին բողբոջին, ուրիշները՝ գործին աւելի անկեղծ վերաբերողները՝ չէին ինքի իրանց յոյսերը նրանց վրա եւ վտանգալից միայն իրանց օյժերին, այնպէս գործ կը սկսէին եւ հաւանականաբար աշոգութիւն կ'ունենային։ Ինչո՞ւ էք ուրեմն խառնվում մի գործի մէջ, որով չէք կարող հետաքրքրվել, ինչու էք խոստանում մի բան, որ չէք կարող իրագործել։ Ինչու էք փչացնում ուրիշների արածը։

Եւ որովհետեւ այդ նոր ձեռի հասարակական գործիչները դեռ չարտահանում են տրագիկոմեդիան, կօժէդիա իրանց համար, տարագրաւորիչների համար, այդ պատճառով շատ ու շատ յանկալի կը լինէր, որ ամեն մի նորաւարտ, որ դիպլոմը ծոցին է դնում Բագրի ճանապարհվելու, իր չեմօգտները կապտելիս չը մոռանար նաեւ զէն չարան իր գլխից զանազան տեսակ «իդէալներ» ու զաղափարներ, որոնք Բագրում տեղ չունեն եւ որոնք համ իրան կարող են մնալ, համ էլ ուրիշներին։ Ով վճռել է սողալ գետին վրայով, նա անդուհանակ է ձախրել օդի մէջ։

Ա. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Մենք ստացանք Շուշուց հետեւեալ հետազոտ. «Գաղբիէլ Սունուլեանցին, Հայկական բեմի համեստ գործիչները, Ղարաբաղի բարձունքի վրա հանդիսաւոր կերպով տօնելով «Պէպօ» անմահ հեղինակութեան երեսնամեակը, որդէնում են իրանց պաշտելի թատերադրողին, որ Պէպօյի անձնաւորութեան մէջ գրել է իր ամբողջ հոգին։ Թող Աստուած պահէ նրա ոչոքը յուրախութիւն հայրենի բեմի։ Խմբի ներկայացուցիչ Արաքսեան»։

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայ թատրոնական ընկերութեան վարչութիւնը մտադիր է առաջնիկայ աշխատ մի պատշաճաւոր ներկայացում տալ Աղամեանի յիշատակին։ Երեկոյթի արդիւնքը կը յատկացնվի թատրոնական ֆօնդ կազմելու գործին։

«НОВОЕ ОБОЗРЕНИЕ» լրագիրը լսել է, որ Բագրում կարճ ժամանակից յետոյ պէտք է ընդգրկի մի առանձին ուսումնարան նախապատրաստելու այն անձանց, որոնք կամենում են լինել նախնային եւ այլ գործարանների կա-

նութիւնը միանգամայն ոչնչացնել։ Եթէ մի տեղ գիտութեան մասին աշոգ կերպով նկատում է. «Մէկի համար դա մի բարձրագոյն, երկրային աստուածուն է, մի ուրիշի համար առատ կաթ մատակարարող մի պարարտ կով»։ չինացիների համար օրինակ՝ գիտութիւնը մի այսպիսի կաթնատու կով է, նրանց հաճելի է գիտութիւնը մինչեւ այն աստիճան, որքան նա անմիջապէս գործադրելի, չահաւէտ է։ Գուցէ լինեն հետեւողական տրամաբաններ, որոնք չինացիներին այս պատճառով ամենաբազաւոր են ամենաքաղաքակիրթ ազգը համարեն։ Իսկ ինչ վերաբերում է գեղարուեստին՝ այդ էլ կաթնատու կով դարձնում մտքից միանգամայն հեռու պէտք է մնալ—այն են սովորեցրել մեզ ամենահանձնարել արուեստագէտները, այս պահանջում գեղարուեստի ամենատարբարական հոգեբանութիւնը, այս է թիւադրում մեզ նորագոյն էսթետիքը, որ միանգամայն ընադիւտական հողի վրա է կանգնած։ Այս սկզբունքի հետ միասին միշտ թարմ է մնում այն խօսքը, որ ասել է յայտնի պատմաբան եւ հրապարակախօս Ջ. Տրայչիլին. «Արուեստագէտը այնքան աւելի բարոյական է—որքան գեղեցիկ է նա ստեղծագործում»։

Գալով Դուրեանի եւ Պէշիկթաշեանի յարաբերութեանը՝ պէտք է նկատել, որ այս վերջինը աւելի հասունացած էր եւ, իբրեւ արուես-

տագործիչներ։ Ուսումնարանում ընդունվելու են 60 հոգի, որոնցից իւրաքանչիւրը, իբրեւ ուսման վարձ, ամսական պէտք է վճարէ 5 ռուբլի։

Պաղոդի եւ վագի հիւանդութիւնների յայտնի մասնագէտներ Սպենսել եւ Նաչեմկի իշխանութեան կարգադրութեամբ ուղարկվում են Ղղար՝ հետազոտելու այն հիւանդութիւնը, որ նկատվում է տեղական այգիներում, եւ հիւանդութեան դէմ այդտեղերին միջոցներ ցոյց տալու։

Հաղորդակցութեան ճանապարհների միջխառնութեան մէջ օտապիւմ են գանգատներ երկաթուղային բանուորներից կապալառուների դէմ, որոնցով նրանք յայտնում են, թէ կապալառուները ժամանակին չեն վճարում բանուորներին հասանելի գումարները, եւ այս հանգամանքը շատ վատ ազդեցութիւն է անում նրանց նիւթական բարեկեցութեան վրա։ Այս գանգատներն ի նկատ առնելով՝ հաղորդակցութեան ճանապարհների միջխառն կարգադրեց, որ երկաթուղային գծերի կառավարիչները միջոցներ գործ դնեն, որպէս զի կապալառուները այսուհետեւ ճշգրտեմաբ եւ ժամանակին վճարեն բանուորներին հասանելի գումարները։

Կիկվից հետազոտում են մայրաքաղաքի լրագիրներին, թէ պօլիտեխնիքական ինստիտուտը անցնելու համար տուած են մօտ 1,000 խընդիւրներ, բայց այն անձերի 100 խնդիրներից, որոնք պէտք է ընդունվեն ինստիտուտում առանց քննութեան։ Առաջին կուրսում ազատ տեղերի թիւը ընդամենը 330 է։

Վրաց ճեմօրիս Փուրցիլիս լրագիրը հաղորդում է հետեւեալը. «Թիֆլիսի Հաւաքար թատրոնական խումբը սոյնսխից Դ. Մ.—չլիլին մի ամիս առաջ ինչ որ տարածախնութիւն է ունենում իր կնիք հետ։ Չարացած կիւր առում է ամուսնուն, որ այլ եւս չէ ուզում նրա հետ ապրել եւ պահանջում է, որ նա հեռանայ տնից։ Խեղճ մարդը առանց ձայն հանելու հեռանում է։ Մի ամսից յետոյ կնոջը յայտնում են, որ Սօզանուխի մօտ Կուր գետից հանել են մի մարդու դիակ։ Կինը գնում է տեսնելու, աւելով թէ՛ «չը լինի իմ ամուսինն է»։ Տեսնելով խեղդվածին, նմանութիւն է տալիս իր մարդուն եւ թողման պատրաստութիւններ տեսնելով, հազնում է սովորական ազի գգեստ եւ լաւ ծէսով թաղում է նրան։ Բայց տեսէք, թէ քրպիթի թիւրմագութիւն է ծագում. թատրոնից յետոյ, երեկոյան, նրա ամուսինը գալիս է տուն եւ յայտնում է, թէ գիւղումն էի գտնվում»։

ԴԱՐԱՆԻ ԶԱՊԻՑ Եւ մեզ գրում են. «Յուլիոսի 29-ին, այստեղի եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց Գրիգոր Ջանչեանի մահվան տարեդարձի առիթով, որ լրացաւ տոյն յուլիոսի 17-ին։ Պատարագ ասուցեց Մկրտիչ վարդապետը, որ մի գեղեցիկ քարոզով բացատրեց նշանաւոր մարդկանց յիշատակը յարգելու նշանակութիւնը։ Եկեղեցում ճառ կարդաց նաեւ տաղետ, գուցէ աւելի ճարտար. բայց մենք համարում ենք, որ ամենապարզ եւ ամենապարզապէս արուեստագէտները, որոնք անկողնի վրա են, որովհետեւ Դուրեանը անպայման աւելի տաղանդաւոր, աւելի ինքնուրոյն եւ աւելի բանաստեղծ է քան թէ Պէշիկթաշեանը, որ երբեմն «թողի» տպաւորութիւն է թողնում—մանաւանդ իր գրաւոր ոտանավորներում, իսկ Դուրեանը՝ երբեք։

Անբաղք եւ վաղամեռիկ բանաստեղծը իր «Իմ մահը» բանաստեղծութեան մէջ մի միտք է յայտնում.

«Իսկ աննշան եթէ մնայ
Երկրի մէկ խոր հողակոյտն իմ
Եւ յիշատակաւ ալ թառամի—
Ո՛հ այն առեն ես կը մեռնիմ»։

Ինչքան մասնաւոր աղբիւրներից մեզ յայտնի է՝ նրա «հողակոյտն» աննշան չէ. ընդհակառակն չեղել է եւ գրաւիչ։ Բայց եթէ «անմահութեան» այս արտաքին նշաններն իսկ չը լինէին եւ եթէ նա Գեօթիկ (Ֆաուստ) համար չը կարողանար եւ իրաւունք իսկ չունենար արտասանելու. «Es kann die spur von meinen erdetagen nicht in Aconen untergehen»—մեր գրական աղքատ աւելի բարոյական է—որքան գեղեցիկ է նա ստեղծագործում»։

Վ. Նալբանդեան

Թէօդոսիա

Электротечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.